Եւ եթէ կամք իցէ ձեր հարցանել զէ՛ր վասն չյօժարելոյ իմ գալ ի Հռօմ, ոչ կարեմ առ այս մասնաւորաբար պատասխանել, զի ունի զբազմազան պատճառս բանաւորագոյնս, բայց գիտացէք զիս յաւէտ ուրախագոյն վասն ոչ մնալոյս անդ, և գնալոյս ուր աճապարեմս արդէն։ Որոյ վասն կացիք բարեաւ ասելով վերստին, խնդրեմ ի ձէնջ թիկնահաս լինել աղօթիւք։

Եւ եթէ աւարտեալ իցէ տպագրութիւն Լօճիգայի Կովդինին, աղաչեմ ոչ մոռանալ զմինն առ իս առաքել սեաւ կապով յիզմիր, ձեռամբ կարնեցի պարոն նահապետին. և հետեւաբար զյետին հատորն բնագանցական. զի զայլ երկուսն ընկալեալ եմ։ Ամենայն միաբանից սրբակրօնից, որք առանձնացեալք կան ի սրբարանդ, սիրով և կարօտիւ ողջոյն ընծայեմ. և յատկապէս իմ Հայր Մկրտչին պատուականի, և սպասեմ տեսանել զնա ի բնուն իսկ հայրենին մեր ի Բիւզանդ. և մի՛ զանգիտասցէ բնաւ, զի առանց հրամանի Սրբազանիդ զոչինչ առնեմ նմա. բաւ է։

Ի Լիվոռնո — Սարգիս Վրդ. և Արքեպս.
1754 ի յապրիլի 22 — Կոստանդինուպօլսեցի

ՃԼԳ.

Հետեւեալ թուղթին ակնարկը կը վերաբերի Պոլսոյ Վենետկեան Դեսպանին, ինչպէս նամակին ընթացքին պիտի տեսնուի արդէն։ Նամակագիրը կը տեղեկագրէ նաև յիշեալ Դիւանագէտին հանդէպ ցոյց տրուած նշանակալից պատուասիրութիւն մը մերայնոց կողմանէ, որ այնքան նախանձ շարժած է հակառակորդներու։

Գերամեծար Տեառն Տեառն Սրբազան քաջ հովուիդ Ստեփաննոսի
Աստուածաբանուրեան վարդապետիդ և մեծի Արբայիդ ողջոյն իսնարհանդէմ մատուցցի

ի Կոստ. յամի 1754 ի մայիսի 19

... ի յանցեալ ամսոյն իջուցին ի ծով զիւշամպաալի նաւ մի, որ ի թագաւորութեան տաճկաց չէր բնաւ տեսեալ ի ֆէնէր՝ ի տանն ասկէրեանց առ ի տեսանել զտեսիլն զայն զարհուրելի։ Բայց չեղև հնար՝ զի նա թէպէտ կամեցաւ գալ, այլ քափիթանն յղեալ մարդ՝ հրաւիրեաց ի տուն իւր։ Վասն որոյ չկարացեալ զդէմ ունիլ՝ գնալ ի տուն նորա։ Եւ յետ սակաւ աւուր դէպ եղև անցանել արքունի ձիոց ընդ այն, և կոչել մեր զնա հանդերձ երեւելեօք նորա. և ցուցանել մեր զարարողութիւնն տաճկաց, ընդ որ յոյժ զուարճացաւ անձն նորա։ Եւ յետ անցանելոյն ձիոց պատրաստեցաք նմա՝ (իրաւի) սեղան արքունի. զտունն աւուր յառաջ մաքրելով և զարդարելով որպէս և վայելուչն է։ Եւ ընդ մեր պատիւն այնքան բերկրեցաւ, որ հաստատեաց բանիւ ի կոստանդնուպօլիս չտեսեալ զայնպիսի պատիւ և զսեղան։ Եւ եկաց առ մեզ զօրն ողջոյն. և ապա չուեաց գնաց ի պալատ իւր։ Իրաւի դղրդեցաւ կոստանդնուպօլիս և յոյնք յիմարեցան, և հայք զուարճացան, զի մեծ պատիւ եղև Հայոց, զի բնաւ ի մէնջ չէր արարեալ այսպիսի իր ուրուքն դաղմագացոց ազգին...։ Բայց զայս յատկաբար Դեսպանն մեր արար՝ զի փառաւորեսցի ազգս մեր և յոյնք նախատեսցին. զի քաջ ծանեաւ զյունաց մեզ չկամենալն բարի։ Եւ նա փոխարէնն արար մեզ զմեծ ընդունելութիւն, և առնելոց իսկ է այլևս։...

Նուաստ անարժան
Աթանաս Վարդապետ